

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ԲՈՅԱԽՉՅԱՆ ՎԱՀԵ ԳԱԳԻԿԻ**

**ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ  
ԲԱՆԿԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**Ը. 00.02. - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում»  
մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի  
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ - 2017**



**Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում**

**Գիտական ղեկավար՝**

**տնտեսագիտության դոկտոր, դոցենտ  
Տիգրան Վլադիմիրի Հարությունյան**

**Պաշտոնական  
ընդդիմախոսներ՝**

**տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
Վարդան Բաբկենի Բոստանջյան**

**տնտեսագիտության թեկնածու, դոցենտ  
Նորայր Սամվելի Բաբայան**

**Առաջատար  
կազմակերպություն՝**

**Հայաստանի ազգային ագրարային  
համալսարան**

**Պաշտպանությունը կայանալու է 2017 թվականի դեկտեմբերի 22-ին ժամը 13<sup>30</sup>-ին Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի Տնտեսագիտության թիվ 015 Մասնագիտական խորհրդի նիստում:**

**Հասցեն՝ 0009, քաղ. Երևան, Աբովյան փող. 52:**

**Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:**

**Սեղմագիրն առաքված է 2017 թվականի նոյեմբերի 21-ին:**

**015 Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,  
տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր**

**Ա.Հ.Առաքելյան**

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Հետազոտության արդիականությունը:** Ժամանակակից ազգային տնտեսության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայաստանի Հանրապետությունը աստիճանաբար հաղթահարում է սոցիալ-տնտեսական զարգացման ծանր փուլի՝ 2008թ.-ի համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական հետևանքները. նկատվում է տնտեսական աճի տեմպերի, գործարար ակտիվության բարձրացում և ձեռնարկատիրական միջավայրի վերականգնում և առողջացում:

Թվում է, թե հանրապետության բանկային ոլորտի (այն, մեծ հաշվով, չտուժեց համաշխարհային ճգնաժամից և ի տարբերություն բազմաթիվ երկրների, որտեղ մեծ թվով բանկեր և այլ ֆինանսավարկային կազմակերպություններ սնանկացան և լուծարվեցին, մեզանում այդպիսի երևույթներ չնկատվեցին) կայունության ապահովման հիմնախնդիրը լուծված է և դրան արդեն պետք չէ լուրջ ուշադրություն հատկացնել: Սակայն համաշխարհային տնտեսությունում տեղի ունեցող իրադարձությունները վկայում են այն մասին, որ տնտեսական աճի տեմպերը և սոցիալական ձեռքբերումները, անկայուն են և ցածր: Գոհացուցիչ չեն նաև ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշները. բավական է նշել, որ ՀՀ-ում 2016թ.-ին տնտեսական հավելածի տեմպը կազմել է ընդամենը 0.2%, ինչը 2009թ.-ի 14.1%-ով անկումից հետո ամենացածր ցուցանիշն է:

Այս իրավիճակում ամենևին էլ պատահական չէ, որ աշխարհի առաջատար երկրների ղեկավարները հայտարարել են իրենց մտադրությունները փոխելու գործող աշխարհակարգը, ձևավորելու նոր ֆինանսական կառույցներ, և կիրառել կառավարման այնպիսի մեթոդներ, որոնք կնվազեցնեն նոր ճգնաժամային երևույթների կամ ճգնաժամերի առաջացման հնարավորությունները և հավանականությունը: Դժբախտաբար, մինչև օրս պատկերացումներն այն մասին թե ինչպիսին պետք է լինի ստեղծվող մոդելը և նոր աշխարհակարգը դեռևս չի ձևավորվել (և այն հազիվ թե առաջիկա տարիներին ձևավորվի համաշխարհային քաղաքականության և տնտեսության մեջ գոյություն ունեցող տարաձայնությունների և հակասությունների, ահագնացող համաշխարհային բնույթի հիմնախնդիրների կուտակման և դրանք չլուծելու պատճառով), չկա նաև ընդհանուր ըմբռնում նաև այն բանի, թե ինչպիսի փոփոխություններ է անհրաժեշտ իրականացնել նաև բանկային ոլորտում և քաղաքականությունում, որպես ցանկացած երկրի տնտեսական քաղաքականության կարևոր և անբաժանելի մասի: Ասվածն ամբողջությամբ և առավել մեծ սրությամբ կանգնած է հատկապես անցումային տնտեսությունների, այդ թվում նաև ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի առջև:

ՀՀ տնտեսությունը, որպես փոքր և բաց տնտեսություն սերտորեն, տեսանելի և անտեսանելի, ուղղակի և անուղղակի կապերով կապված է համաշխարհային տնտեսության հետ, և նշել, որ 2008թ.-ի համաշխարհային ֆինանսատնտեսական

ճգնաժամի հետևանքները հաղթահարվել են, առնվազն վաղաժամկետ է, առավել ևս, որ 2016թ.-ին ՀՀ ՀՆԱ մեծությունը (դոլարային արտահայտությամբ) ավելի փոքր է նախաճգնաժամային՝ 2008թ.-ի ՀՆԱ-ի մեծությունից:

Տնտեսական ցածր ակտիվության համայնապատկերին նվազում են առանձնապես մետաղների և դրանց հանքաքարի համաշխարհային գները: Օրինակ, 2017թ.-ի մայիսի սկզբին 1 տ. պղնձի գները կազմել են 5495 ԱՄՆ դոլար<sup>1</sup>, որը զգալիորեն (շուրջ 40%-ով) ցածր է 2008թ.-ի գներից: Հաշվի առնելով ՀՀ ազգային տնտեսության դիվերսիֆիկացման թույլ աստիճանը, դրանում մի շարք սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների առկայությունը, հանրապետության տնտեսության զարգացման վրա բանկային ոլորտի կայունության ազդեցությունը, բանկային ոլորտի կայունության բարձրացմանն ուղղված քաղաքականության կատարելագործման ուղիների հարցը ձեռք է բերում առանձնահատուկ կարևորություն:

Հարցը թե ինչպիսին կլինի մոտակա տարիներին ՀՀ տնտեսությունը և նրա դրամավարկային քաղաքականությունը շարունակում է մնալ բարդ: Արտարժույթի փոխարժեքների տատանողականությունը, արտարժույթային ռիսկերը, հանքահումքային ապրանքների գների արագ փոփոխությունները համաշխարհային շուկայում, կարող են նոր դժվարությունների և հիմնախնդիրների առջև կանգնեցնել ազգային տնտեսության զարգացումը: Տնտեսությունում պահպանվող հակասությունները, ներդրումների ներհուքի ցածր ցուցանիշը, դրանց արտահոսքը և տնտեսական լարվածության մյուս օջախները մնում են, իսկ հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման կայունության ապահովման հիմնախնդիրները նախկինի նման մնում են չլուծված, որոնք, սակայն, պահանջում են զգալի ուշադրություն՝ դրանց բացահայտման և լուծումների որոնման ճանապարհին:

Այդ հարցադրումների լուծումներն անկասկած պահանջում են երևույթի հիմքերի համալիր հետազոտություն, այդ նպատակով պետության տնտեսական քաղաքականության ծրագրային մոտեցումների վերլուծություն և համապատասխան լուծումների առաջադրում: Ատենախոսությունը նվիրված է այդ հիմնահարցերի հետազոտությանը, որով էլ պայմանավորված է թեմայի արդիականությունը:

**Հետազոտության օբյեկտը և առարկան:** Ուսումնասիրության օբյեկտը ՀՀ տնտեսությունն է ու նրա բաղկացուցիչ մասը կազմող բանկային ոլորտը, իսկ ուսումնասիրության առարկան՝ տնտեսության և բանկային ոլորտի փոխառնչություններն են՝ վերջինիս կայունության ապահովման միջոցով:

**Հետազոտության նպատակը և խնդիրները:** Ատենախոսության հիմնական նպատակը ՀՀ տնտեսության զարգացմանը նպաստող բանկային ոլորտի կայունության ապահովման ուղիների բարելավումն է, որին հասնելու համար աշխատանքում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները՝

➤ բացահայտել ՀՀ-ում տնտեսական աճի ապահովման հետճգնաժամային հիմնախնդիրներն ու դրանց առաջացման հիմնական պատճառները,

<sup>1</sup> [www.armtimes.com](http://www.armtimes.com). Միջազգային գներ և փոխարժեքներ:

- ուսումնասիրել գործարարության խոչընդոտները միկրո- և մակրոմակարդակներում,
- հետազոտել բանկային ոլորտի կայունության հասկացության վերաբերյալ հիմնական մոտեցումներն ու մեկնաբանությունները,
- գնահատել ՀՀ տնտեսական և ֆինանսական մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների միտումներն ու փոխառնչությունները տնտեսաչափական մոդելի օգնությամբ,
- վերլուծել բանկային ոլորտի ազդեցությունը տնտեսական աճի ապահովման գործում, ինչպես նաև բացահայտել շուկայական մրցակցության առանձնահատկությունները այդ ոլորտում,
- ուսումնասիրել կայունության ապահովման հիմնական ուղիները բանկային ոլորտում:

**Ատենախոսության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը:** Ատենախոսության համար հիմք են հանդիսացել տնտեսագիտության տեսության դասական և գործնական բնույթի աշխատությունները, անցումային տնտեսությանը վերաբերող ուսումնասիրությունները, տնտեսական քաղաքականության հիմնական բնագավառների վերաբերյալ արտասահմանյան և հայրենական մասնագիտական գրականությունը, այդ ոլորտը կարգավորող ՀՀ օրենքներն ու մյուս իրավական ակտերը:

Ուսումնասիրության համար անհրաժեշտ տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ ԱՎԾ-ի, ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական նյութերն ու տվյալները, Հայաստանի գործարարների հանրապետական միության և Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի աջակցությամբ իրականացված «ՓՄՁ իրավիճակային համապարփակ հետազոտություն» ու Աշխատանքի միջազգային կազմակերպության աջակցությամբ իրականացված «Նպաստավոր միջավայր Հայաստանում կայուն ձեռնարկությունների համար» (մարտ, 2016թ.) ուսումնասիրության արդյունքները:

Հետազոտության ընթացքում կիրառվել են տնտեսավիճակագրական, տնտեսաչափական, համակարգային, համեմատական և գործոնային վերլուծության ու ամփոփումների մեթոդները:

**Հետազոտության գիտական նորույթը:** Աշխատության հիմնական գիտական արդյունքները, որոնք պայմանավորված են ուսումնասիրությունում առաջադրված խնդիրների լուծմամբ, կայանում են հետևյալում՝

1. Հիմնավորվել և գնահատվել են տնտեսության զարգացման արդի մարտահրավերները, կատարվել է ըստ կարևորության դրանց դասակարգումը, որոնց շարքում առանձնացվել է առևտրային կազմակերպությունների (հատկապես ՓՄՁ-ների համար) պարտքերի հիմնախնդրի լուծման անհրաժեշտությունը՝ որպես տնտեսության զարգացումը արգելակող առաջնահերթ լուծում պահանջող խոչընդոտ:

2. Տնտեսաչափական մոդելի միջոցով վերլուծվել և գնահատվել են ՀՀ-ում ՀՆԱ-ի շարժի (տնտեսական աճի), սպառողական գների ինդեքսի (ՍԳԻ), փողի

զանգվածի, բանկային տոկոսի հաշվարկային դրույքի ու վարկային տոկոսադրույքի միջև երկարաժամկետ և կարճաժամկետ ազդեցությունների կապերը:

3. Գնահատվել է ՀՀ բանկային ոլորտում կարգավորման մեխանիզմների համապատասխանությունը կարգավորման ժամանակակից (համընդհանուր ընդունված) նորմերին, և իրականացված վերլուծության հիման վրա առաջարկվել են բանկային ոլորտի կայունության ապահովման գործիքներ, որոնց հիմնական նպատակաուղղվածությունը պետք է լինի տնտեսության իրական հատվածի պահանջմունքները հաշվի առնելը (միկրոմակարդակում) և երկրի տնտեսական կայուն զարգացման ապահովումը (մակրոմակարդակում):

4. Առաջարկվել է ՀՀ առևտրային բանկերում ճգնաժամերի վաղ կանխարգելման համակարգի ներդրումը, որը ենթադրում է այնպիսի համակարգի առկայություն, որի նպատակն է՝ ոչ թե հնարավոր ճգնաժամերի հետևանքների վերացումը, այլ առևտրային բանկերում այնպիսի ռազմավարական պլանավորումը և բանկային ոլորտի կայունության սցենարների մշակումը, որոնք թույլ են տալիս կանխատեսել ճգնաժամային իրավիճակը և դրա հավանականությունը, ուստի և՛ թույլ չտալ բանկային ճգնաժամի առաջացումը:

5. Առաջարկություններ են ներկայացվել ՀՀ առևտրային բանկերի գործունեության դիվերսիֆիկացման վերաբերյալ, ինչը պայմանավորված է բանկային ծառայությունների ոլորտում նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրմամբ և բանկային ապրանքների, առաջարկությունների համար ազգային սահմանների վերացմամբ:

**Հետազոտության արդյունքների գործնական նշանակությունը և օգտագործումը:** Ատենախոսությունը ավարտուն գիտական հետազոտություն է, որտեղ կատարված վերլուծություններից բխող եզրահանգումների և եզրակացությունների հիման վրա արված առաջարկություններն ու հանձնարարականները, ինչպես նաև բանկային ոլորտի կայունության բարձրացման արդյունքում տնտեսության զարգացման ապահովման հիմնախնդիրներից ելնելով առաջարկված գնահատումները կարող են օգտագործել ինչպես նախարարությունների՝ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների, ՀՀ ֆինանսների, այնպես էլ ՀՀ կենտրոնական բանկի կողմից տնտեսության զարգացման վերաբերյալ ծրագրերի և քաղաքականության մշակման, իրական հատվածի ու բանկային ոլորտի միջև համագործակցության ամրապնդման աշխատանքների իրականացման ժամանակ:

Ուսումնասիրության արդյունքները կարող են օգտակար լինել ՀՀ պետական կառավարման մարմինների, ՀՀ կենտրոնական բանկի, ինչպես նաև գործարարության և բանկային ոլորտի փոխառնչություններով զբաղվողների համար:

**Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:** Ատենախոսության հիմնադրույթները և ուսումնասիրության արդյունքները քննարկվել են ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում: Ատենախոսության հիմնական արդյունքներն ու բովանդակությունն արտացոլված են

հեղինակի կողմից հրապարակված 6 (վեց) գիտական հոդվածներում:

**Ատենախոսության ծավալն ու կառուցվածքը:** Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսության տեքստը շարադրված է 179 էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

**Ներածությունում** հիմնավորված է թեմայի արդիականությունը, կիրառման ոլորտները, ձևակերպված են հետազոտության նպատակն ու խնդիրները, տրված են հետազոտության առարկան և օբյեկտը, ներկայացված են հետազոտության հիմնական արդյունքներն ու գիտական նորոյթը, դրանց գործնական նշանակությունը:

**Ատենախոսության առաջին՝** «Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման արդի մարտահրավերները» գլխում ուսումնասիրվել են տնտեսական աճի ապահովման հետճգնաժամային հիմնախնդիրները, մասնավորապես կենտրոնանալով գործարարության համար առկա խոչընդոտներին, ինչպես միկրո-, այնպես էլ մակրո-մակարդակներում: Աշխատության այս մասում ներկայացվել են նաև բանկային ոլորտի կայունությունը բնութագրող տեսական և գործնական մոտեցումները, բանկային ոլորտի կայունության հասկացությունը և այդ հասկացության մեկնաբանությունները տարբեր հեղինակների կողմից:

Տնտեսական ինչպես տեղական, այնպես էլ տարածաշրջանային և համաշխարհային ճգնաժամների քաղաժ դասերը լավ են ուսումնասիրված<sup>2</sup> և տնտեսագիտության տեսությունից հայտնի է, որ եթե երկրի տնտեսությունը աճում է բարձր տեմպերով, ապա անհրաժեշտ է բարձրացնել բանկային տոկոսի հաշվարկային դրույքաչափը (դրանով իսկ անցում կատարել «էժան» փողերից «թանկ» փողերի), բարձրացնել հարկերի դրույքաչափերը (դրանով թուլացնել գործարարների շահագրգռվածությունը թողարկելու ավելի շատ բարիքներ) և «փակի» տակ պահել ներդրումների ծավալը (զսպելով դրանց աճը հնարավորություն չի մնում ավելացնելու արտադրական կարողությունները, որոնք բարիքների ավելացման մայրուղին են): Եվ երբ տնտեսությունը կորցնում է զարգացման թափը և նկատվում է տնտեսական աճի դանդաղում կամ էլ բարիքների ծավալների նվազում անհրաժեշտ է խթանել՝

<sup>2</sup> Տե՛ս, մասնավորապես, «Ֆինանսատնտեսական ճգնաժամը Հայաստանում և աշխարհում», Վ.Լ.Հարությունյանի խմբագրությամբ, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2009թ., 222 էջ, Հարությունյան Վ.Լ. «Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամ. պատճառներ, հակաճգնաժամային միջոցառումներ և դասեր», Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2009թ., 146 էջ, Հարությունյան Վ., Խաչատրյան Վ. «Ճգնաժամ. մակրոտնտեսական իրավիճակն աշխարհում և Հայաստանում», Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010թ., 308 էջ, Հարությունյան Վ., Սարգսյան Կ. «Պետական հակաճգնաժամային քաղաքականության միջազգային փորձը և դրա վերլուծությունը», Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2014թ., 176 էջ:

ավելացնելու աճի աղբյուրները կամ հնարավորությունները: Այս դեպքում նշված գործընթացների իրականացման համար տնտեսագիտության գինանոցը առաջարկում է օգտագործել հետևյալ միջոցները (գործիքները)՝ նվազեցնել բանկային տոկոսադրույքները, հարկերը, տնտեսության մեջ խրախուսել ներդրումների ծավալների ավելացումը, այդ թվում նաև պետական միջոցներից, ավելացնել զբաղվածությունը և սպառումը: Այսինքն՝ վարվել առաջին սցենարին ճիշտ հակառակը:

Հեղինակի եզրահանգումներից մեկն այն է, որ երկրի տնտեսության զարգացման հաջողությունը պայմանավորում են ավելի շատ ոչ թե դրանց հասնելու կառավարման գործիքները, որքան դրանցից օգտվելու հմտությունները, արհեստավարժությունը, տնտեսության ոլորտների կառավարման որակը և քաղաքական կամքը:

Հայաստանի գործատուների հանրապետական միության կողմից իրականացված հետազոտությունը<sup>3</sup> վկայում է, որ մոտակա ժամանակահատվածում բարելավման կարիք ունեցող ամենակարևոր հենասյուներն են՝

- լավ կառավարումը և քաղաքական կայունությանը վերաբերող խնդիրները,
- վստահելի և կայուն մակրոտնտեսական քաղաքականությունը և տնտեսության, ներառյալ էներգամատակարարումը, լավ կառավարումը,
- առևտուրը և կայուն տնտեսական ինտեգրումը,
- նպաստավոր իրավական և կանոնակարգող միջավայրը,
- արդար մրցակցությունը,
- ֆինանսական ծառայությունների մատչելիությունը,
- կրթությունը, ուսուցումը և ցկյանս ուսումնառությունը:

Հայրենական և արտասահմանյան հեղինակների կողմից իրականացված հետազոտություններում առկա են «բանկային ոլորտի կայունություն» հասկացության բովանդակության և դրա մեկնաբանությունների տարընթերցումներ: Մինչև օրս, օրինակ, նկատվում է «կայունություն», «անխախտություն», «հուսալիություն» և «հավասարկշռություն» հասկացությունների տարբերություններ: Իսկ հաճախ էլ դրանց միջև տարբերությունները ջնջվում են:

Բանկային ոլորտի և նրա տարրերի գործունեության կայունության վերլուծության արդյունքում ամրագրվում է, որ կայունությունը՝

- երկարատև, մշտական գործընթաց է և այն պետք է տարբերել աճից, գործունեության մասշտաբների ընդլայնումից, ինչը նկատվում է, օրինակ, վարկային էքսպանսիայի ժամանակ,
- բանկային ոլորտի և նրա բոլոր մասերի, կառուցվածքների զարգացում է,
- համակարգային գործընթաց է, որը բնութագրում է ոչ միայն բանկերի, այլ նաև բանկային ենթակառուցվածքների զարգացումը,
- այնպիսի գործընթաց է, որն ապահովում է բանկային գործունեության տարբեր ուղղությունների իրական, հաշվեկշռված զարգացումը:

<sup>3</sup> «Նպաստավոր միջավայր Հայաստանում կայուն ձեռնարկությունների համար», International Labor Office, Geneva, Ձեռնարկությունների վարչություն, մարտ 2016թ.:

Հեղինակն ամփոփում է, որ բանկի կայունության, հուսալիության միասնական համընդհանուր մեթոդաբանություն գոյություն չունի, որը կիրառելի է աշխարհի բոլոր երկրների համար: Այսպիսի մոտեցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ բանկերը տարբերվում են իրենց գործառնությունների աշխարհագրությամբ, հատկանիշներով, իրականացվող գործառնությունների և ծառայությունների հավաքածուներով, հաճախորդների կազմով, տարածքային ճյուղավորվածությամբ, ֆինանսական շուկաներում վարվող քաղաքականությամբ և մի շարք այլ հատկանիշներով:

Համաաշխարհային բանկային պրակտիկայում առևտրային բանկերի գործունեության կարգավորումն իրականացվում է երկու հիմնական մոտեցումներով՝

➤ կոնկրետ բանկի ցուցանիշների համակարգի վերլուծության և այդ ցուցանիշները համանման, առաջնակարգ բանկերի ցուցանիշների հետ համադրությունների հիման վրա,

➤ հսկողություն իրականացնող մարմինների կողմից նորմատիվների սահմանմամբ և դրանց հիման վրա բանկի կայունության վարկանիշային գնահատման հիման վրա:

**Ատենախոսության երկրորդ՝** «Տնտեսության զարգացման միտումները, բանկային ոլորտի հիմնախնդիրները և մրցակցության առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում» գլխում վերլուծվել են ՀՀ մակրոտնտեսական և բանկային ոլորտի հիմնական ցուցանիշներն ու դրանց փոխառնչությունները, ինչպես նաև զարգացման միտումները 2000-2016 թվականներին: Ատենախոսության այս մասում ուսումնասիրվել է տնտեսական աճի ապահովման գործում ՀՀ բանկային ոլորտի դերը, դիտարկվել են բանկային ոլորտի ռեսուրսները և ակտիվ գործառնությունները, ուսումնասիրվել է նշված ժամանակահատվածում բանկային ոլորտի զարգացման դինամիկան, հիմնական ցուցանիշները, բացահայտվել են այդ ոլորտի առանձնահատկություններն ու առկա թերությունները:

Հեղինակը քննարկել է Հայաստանի Հանրապետության բանկային ոլորտում շուկայական մրցակցության առանձնահատկությունները:

Աշխատության երկրորդ գլխում հետազոտություն է կատարվել, որի նպատակն է՝ բացահայտել ՀՀ-ում ՀՆԱ-ի, տնտեսական աճի, սպառողական գների ինդեքսի (ՍԳԻ-ի), փողի զանգվածի, բանկային տոկոսի հաշվարկային դրույքի և վարկային միջին տոկոսադրույքի միջև երկարաժամկետ և կարճաժամկետ ազդեցության կապերը: Վերը նշված ազդեցությունները գնահատելու համար խնդիրը բաժանվել է 3 մասի: Առաջին մոդելով գնահատվել է ՀՆԱ-ի և փողի զանգվածի միմյանց վրա փոխադարձ երկարաժամկետ և կարճաժամկետ ազդեցության արժեքները, երկրորդ մոդելով՝ ՍԳԻ-ի, բանկային տոկոսի հաշվարկային դրույքի և վարկային միջին տոկոսադրույքի միջև եղած երկարաժամկետ և կարճաժամկետ ազդեցության արժեքները, իսկ երրորդ մոդելով՝ տնտեսական աճի, ՍԳԻ-ի և վարկային միջին տոկոսադրույքի միջև եղած երկարաժամկետ և կարճաժամկետ ազդեցության արժեքները:

Տնտեսաչափական մոդելների կիրառմամբ իրականացված հետազոտության արդյունքներով՝ փողի զանգվածը և ՀՆԱ-ն չունեն միմյանց վրա երկարաժամկետ կամ կարճաժամկետ ազդեցության կապեր: Մյուս կողմից, բանկային տոկոսի հաշվարկային դրույքը և վարկի միջին տոկոսադրույքը երկարաժամկետ և կարճաժամկետ պատճառահետևանքային կապ չունեն ՍԳԻ հետ: Բանկի տոկոսի հաշվարկային դրույքը և ՍԳԻ-ն երկարաժամկետ և կարճաժամկետ պատճառահետևանքային կապ չունեն վարկի միջին տոկոսադրույքի հետ: Տնտեսական աճի վրա ևս վարկի միջին տոկոսադրույքը և ՍԳԻ-ն որևէ պատճառահետևանքային ազդեցություն չունեն:

Քննարկելով ՀՀ բանկային ոլորտի կողմից միջոցների ներդրման հիմնական ուղղությունները և այդ ցուցանիշների շարժը, աղյուսակ 1-ում ներկայացվել է 01.01.2006թ.-ից մինչև 01.01.2017թ.-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ բանկային ոլորտի պահանջները, որոնք հաշվարկվել են ՀՀ ԿԲ-ի կողմից առևտրային բանկերի ներկայացրած տվյալների հիման վրա<sup>4</sup>:

Ներկայացված տվյալների վերլուծությունը թույլ է տալիս կատարելու հետևյալ եզրահանգումները.

➤ օտարերկրյա (արտաքին) զուտ ակտիվների ծավալը, որը բացասական դարձավ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի<sup>5</sup> հետևանքով, շարունակում է ավելանալ. ՀՀ բանկային ոլորտն ավելի ու ավելի շատ ներդրումներ է կատարում օտարերկրյա պետությունների տնտեսություններում, և ներկայումս այդ գործառնությունները (ոչ ռեզիդենտների պարտավորությունները հանելուց հետո) կազմում են ՀՀ բանկային ոլորտի ակտիվային գործառնությունների 21.5%-ը,

➤ ճգնաժամի հետևանքով առաջացած ոչ ռեզիդենտների ռեսուրսների արտահոսքը փոխարինվել է ՀՀ ԿԲ-ի և ՀՀ կառավարության կողմից, որոնք 01.11.2008թ.-ից մինչև 01.12.2009 թվականը եղել են ՀՀ առևտրային բանկերի զուտ (մաքուր) վարկատուներ (կրեդիտորներ): Հետագայում իրադրությունը վերկանգնվել է. կարգավորողը սկսել է կլանել ավելորդ իրացվելիությունը: Սակայն առանձին ժամանակահատվածներում բանկային իրացվելիությունն ավելի ու ավելի շատ է շարունակել զգալ ՀՀ ԿԲ-ի և ՀՀ կառավարության աջակցության անհրաժեշտությունը:

Տնտեսության համար բանկերի վարկային ներդրումների արդյունավետությունը գործնականում բարձր չէ ՀՀ բոլոր մարզերում, բացառությամբ Երևան քաղաքի: Հատկապես զգացվում է վարկային ռեսուրսների անբավարարությունն ու դրանց «թանկությունը» ինչպես տնտեսավարող սուբյեկտների, այնպես էլ բնակչության

<sup>4</sup> ՀՀ կենտրոնական բանկ. դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ցուցանիշները: Վարկային կազմակերպություններ ակնարկ: <http://www.clam/statistics/?Prtid=dkfs>

<sup>5</sup> 01.01.2008թ.-ի դրությամբ օտարերկրյա (արտաքին) զուտ ակտիվները եղել են բացասական, այսինքն ոչ ռեզիդենտները ֆինանսավորել են ՀՀ առևտրային բանկերին: Նրանց բաժին է հասել ՀՀ բանկային ոլորտի ռեսուրսների 11.4%-ը, 01.07.2012թ.-ի դրությամբ՝ 22.5%, 01.07.2014թ.-ի դրությամբ՝ 21.8%, 01.01.2017թ.-ի դրությամբ՝ 21.5%: Սկսած 01.01.2008թ.-ից մինչև 01.01.2017թ.-ը դրությամբ արտաքին (օտարերկրյա) ակտիվներն, առանց բացառությունների, ունեցել են բացասական մեծություն:

համար: Մարզերում բանկային ծառայությունների ինստիտուցիոնալ հագեցվածության ցուցանիշը 100 հազար բնակչի հաշվով տատանվում է 45-ից 55%-ի սահմաններում:


## Աղյուսակ 1

### ՀՀ բանկային ոլորտի պահանջների շարժը, մլն ՀՀ դրամ

Ժամանակահատվածը	Տնային տնտեսություններ	Ձեռնարկություններ և շահույթի ստացման նպատակ չհետապնդող կազմակերպություններ	Այլ ֆինանսական կազմակերպություններ	Զուտ պահանջներ կառավարության նկատմամբ	Զուտ պահանջներ ԿԲ-ի նկատմամբ	Զուտ արտաքին ակտիվներ (փոխարկելի արտարժույթ)
01.01.2006	83,098	98,856	6,546	22,262	71,555	18,584
01.07.2006	100,969	109,748	8,319	21,594	64,145	7,792
01.01.2007	119,729	112,039	9,679	25,883	100,037	10,689
01.07.2007	158,922	137,705	9,624	23,653	94,558	570
01.01.2008	226,036	194,989	8,741	35,764	120,347	(75,817)
01.07.2008	294,303	243,860	12,191	43,401	65,819	(74,603)
01.01.2009	337,113	293,722	7,479	59,137	49,731	(147,663)
01.07.2009	308,131	312,915	9,027	35,009	117,477	(133,201)
01.01.2010	312,786	399,372	15,257	27,146	152,788	(136,286)
01.07.2010	333,003	437,323	14,318	3,126	111,246	(129,730)
01.01.2011	374,342	528,461	18,979	44,671	132,318	(229,981)
01.07.2011	409,743	654,829	22,861	35,292	125,060	(298,787)
01.01.2012	484,476	741,422	23,907	64,951	190,864	(422,628)
01.07.2012	528,896	918,152	30,656	60,660	128,397	(483,783)
01.01.2013	568,802	985,771	31,958	110,373	164,678	(555,464)
01.07.2013	629,334	981,993	40,920	114,329	161,586	(547,613)
01.01.2014	678,366	1,061,521	39,974	166,251	335,523	(711,184)
01.07.2014	743,280	1,087,087	42,492	162,016	231,651	(632,715)
01.01.2015	824,210	1,279,519	35,060	181,612	232,350	(810,547)
01.07.2015	801,642	1,215,375	36,088	184,836	264,073	(708,505)
01.01.2016	793,486	1,234,756	37,763	205,352	370,093	(726,885)
01.07.2016	797,580	1,286,212	45,222	240,892	339,823	(668,433)
01.01.2017	793,437	1,347,262	50,143	386,887	511,530	(844,746)

Աղբյուրը՝ կազմվել և հաշվարկվել է ՀՀ կենտրոնական բանկի տվյալներով:

Ինչպես հանրապետության տնտեսության, այնպես էլ բանկային ոլորտի վրա շարունակվում են ապակառուցողական գործոնների ազդեցությունը, որոնք ուժեղացնում են բանկային գործունեությունում հակասությունները և, մասնավորապես, այն հակասությունը, որը նկատվում է տնտեսական աճի տեմպերի և առևտրային բանկերի կողմից տրամադրվող վարկերի ծավալների միջև (գծանկար 1):



**Գծանկար 1. ՀՀ ՀՆԱ-ի հավելվածի (ծախ սանդղակ) և ընդամենը բանկային վարկերի (աջ սանդղակ) շարժը 2005-2016 թվականներին, %-ով<sup>6</sup>**

ՀՀ բանկային ոլորտում շուկայական մրցակցության առանձնահատկությունները դիտարկելիս քննարկվել է բանկային ոլորտում կենտրոնացման ձևավորված մակարդակը և գնահատվել է ՀՀ ԿԲ-ի վարած դրամավարկային քաղաքականությունը, որն ուղղված էր առևտրային բանկերի թվի կրճատմանը և դրանց խոշորացմանը: Վերլուծությունը կառուցվել է՝ առանձնացնելով համակարգի 3 «ամենա» բանկերը՝ որպես համակարգաստեղծ բանկեր, և դրանց դասակարգումը կատարվել է դրանց վերաբերյալ հրապարակվող տեղեկությունների հիման վրա<sup>7</sup>:

Համեմատությունների նպատակով վերլուծություններ են կատարվել նաև «երկրորդ» խմբի՝ 4-10-րդ տեղերում գտնվող առևտրային բանկերի, ինչպես նաև ոլորտի մնացած բանկերի (երրորդ խմբի) համար: Երեք ամենախոշոր բանկերին 2016թ.-ին բաժին է ընկել ՀՀ բանկային ոլորտի ակտիվների 40.19%-ը, այն բանկերին, որոնք իրենց ակտիվների մեծությամբ զբաղեցնում են 4-ից 10-րդ տեղերը՝ ընդամենը ակտիվների 40.96%-ը, իսկ մյուս բանկերին՝ 18.85%:

<sup>6</sup> Կազմվել է հեղինակի կողմից ՀՀ կենտրոնական բանկի՝ [www.cba.am](http://www.cba.am) և ՀՀ ԱՎԾ-ի՝ [www.armstat.am](http://www.armstat.am) պաշտոնական կայքերի տվյալներով:

<sup>7</sup> Այդ տվյալները տեղադրված են ՀՀ կենտրոնական բանկի կայքում. [www.cba.am/analytics/bank-system/](http://www.cba.am/analytics/bank-system/).

Աշխատության մեջ կատարված՝ ըստ 2016թ.-ի հաշվեկշռային ակտիվների չափի կենտրոնացվածության աստիճանի վերլուծությունը ցույց է տալիս, մասնավորապես, որ.

➤ խոշորագույն 3 բանկերին բաժին է ընկնում վարկային պորտֆելի 43.4%-ը, սակայն դրա հետ մեկտեղ նաև պարտավորությունների 42.4%-ը, այսինքն՝ այդ բանկերի վարկային ռիսկերի մակարդակն ավելի ցածր է, քան մյուս բանկերինը: Ավելին, երրորդ խմբի մեջ մտնող բանկերում զուտ պահուստային ծախսերը էականորեն ցածր են (22.1% ամենախոշոր 3-ում՝ 70.6%՝ 4-10 բանկերի խմբում և 7.3%՝ ոչ խոշոր բանկերում): Ինչպես տեսնում ենք, այս ցուցանիշի գծով ամենառիսկայինն են երկրորդ խմբի բանկերը, քանի որ այդ խմբի հաշվեկշռային 40% ակտիվներին բաժին է ընկնում զուտ պահուստային ծախսերի 70.6%-ը:

**Ատենախոսության երրորդ՝** «Կայունության ապահովման հիմնական ուղիները Հայաստանի Հանրապետության բանկային ոլորտում» գլխում ներկայացվել են ատենախոսի մոտեցումները, մշակումները հետևյալ ուղղություններով՝ բանկային ոլորտի կառավարման գործում դրամավարկային միջոցների օգտագործման, բարելավման, ինչպես նաև բանկերում ճգնաժամային իրավիճակների վաղ կանխարգելման համակարգի ստեղծման, ներդրման և կիրառման վերաբերյալ: Ատենախոսության հեղինակը դիտարկել է առևտրային բանկերի գործունեության դիվերսիֆիկացումը որպես բանկային ոլորտի կայունության ապահովման հիմնական միջոցներից մեկը:

Բանկային ոլորտի կայունության կառավարումն իրականացվում է ինչպես միկրո-, այնպես էլ մակրոմակարդակում: Եթե միկրոմակարդակում այդ գործընթացի թիրախն է բանկային ոլորտում գործունեություն ծավալող առանձին տնտեսավարող սուբյեկտների և այդ համակարգի առանձին ենթակառուցվածքների գործունեության կայունության և երկարաժամկետ հաշվեկշռված աճի ապահովումը, ապա մակրոմակարդակում իրականացվում է երկրի համար ընդունված դրամավարկային քաղաքականության միջոցառումների համախումբը, որի նպատակն է երկրի տնտեսական աճի ապահովման համար նպաստավոր պայմանների ստեղծումը:

Նշված ընդհանրական հիմնախնդրի լուծման ուղիները որոշելու համար սահմանվում են միջանկյալ (մարտավարական) նպատակներ, որոնցից են՝ արժույթի թիրախավորումը, տոկոսադրույքների թիրախավորումը, իսկ ժամանակակից տնտեսությունում նաև՝ գնաճի թիրախավորումը:

Բանկի գործունեության դիվերսիֆիկացման գնահատման ձևերից առանձնացվում է փորձագիտական գնահատումը, որոնք գնահատման 100-բալային սանդղակով պետք է գնահատեն բանկի գործարարության հավասարակշռվածության մակարդակը: Փորձագետների կարծիքների համադրելիությունն ապահովելու նպատակով առաջարկվում է բալային գնահատումն իրականացնել հետևյալ սանդղակին համապատասխան (աղյուսակ 2):

**Առևտրային բանկի գործունեության հավասարակշռվածության գնահատման համակարգը**

Գնահատականների միջակայքը	Նկարագրությունը
0 - 25	Բանկի կառուցվածքը չի համապատասխանում կազմակերպության ընթացիկ և հեռանկարային պահանջներին, ինչպես նաև արտաքին գործոններով պայմանավորված պահանջներին:
26 - 50	Բանկի գործունեության ուղղությունները փոխկապված չեն, հատվածական են, փոփոխվում են՝ կախված շուկայի իրավիճակից: Բանկն իրականացնում է ոչ հեռանկարային գործունեության տեսակներ:
51 - 75	Բանկի գործունեության ուղղությունները հիմնականում համապատասխանում են բանկի պահանջունքներին և արտաքին պայմաններին: Գործունեության առանձին ուղղությունների միջև բացակայում է փոխկախվածությունը:
76 - 100	Գործարարության հավասարակշռվածությունը մոտ է 100%-ի: Գործնականում բանկի գործունեության բոլոր ուղղությունների միջև առկա է համագործակցության դրական արդյունքը:

Աղյուսակը առաջարկվել է հեղինակի կողմից:

Առաջարկվում է առևտրային բանկի գործունեության դիվերսիֆիկացման գնահատման գործընթացն իրականացնել հետևյալ փուլերով՝

- 1) բանկի գործունեության ընդլայնման ռազմավարությամբ սահմանված խնդիրների լուծման մակարդակի որոշումը,
- 2) վերլուծական ցուցանիշների կառուցվածքի սահմանումը,
- 3) ցուցանիշների խմբավորումը, որոշակի ցուցանիշների գնահատման ձևերի սահմանումը,
- 4) վերջնական արդյունքի վրա ազդեցություն ունեցող բոլոր հայտնի գործողությունների հաշվառմամբ հավանական անհամապատասխանությունների որոշումը,
- 5) դրական կամ բացասական այն իրադարձությունների բացահայտումը, որոնք իրենց ազդեցությունն են ունեցել առևտրային կազմակերպության գործունեության արդյունքների վրա, ինչպես նաև այն էական իրադարձությունների մատնանշումը, որոնք կանխատեսված են եղել ռազմավարությամբ,
- 6) ռազմավարության իրականացման վերլուծության համար մասնագետների ընտրությունը,
- 7) առևտրային կազմակերպության գործունեության վրա հետևանքներ ունեցած իրադարձությունների արդյունքների վերլուծությունը:

Հեղինակը նշում է, որ ժամանակակից պայմաններում առևտրային բանկի գործունեության դիվերսիֆիկացման հաջողված քաղաքականության համար մեծ նշանակություն ունեն հետևյալ գործոնները՝

- առևտրային բանկի մեկնարկային «ուժեղ» դիրքը, որը ներառում է կապիտալի առկայությունը, որակավորված և ստեղծագործական բարձրագույն կառավարումը, բանկային ապրանքի առանձնահատկությունները,
- կարևորագույն ցուցանիշների աճը, որոնց շարքում են՝ կապիտալի մեծությունը, բանկի վարկանիշը և համբավը,
- հաճախորդների համար բանկի գործունեության թափանցիկությունը, հաջողության հասնելու գաղափարի վրա կենտրոնացումը, հաջող ընտրված շուկայի հատվածը, ուժեղ ռազմավարությունը, որի հիմքում դրված են բանկի գոյություն ունեցող կամ ձեռք բերված ուժեղ կողմերը,
- բոլոր տեսակի ակտիվների, ներառյալ՝ իմիջային, բանական (ռացիոնալ) օգտագործումը,
- կանոնակարգված տեղեկատվական կառավարման համակարգը և դիսկերի հստակ կառավարումը
- նորարարություններ ներդնելու ընդունակությունը, որը ենթադրում է բանկի ինտեգրման և գործառնական անկախության միջև հաշվեկշռված մոտեցման կիրառումը,
- բանկի բնականոն գործունեության ապահովումը՝ առանց մատուցվող ծառայությունների արժեքի ավելացման, ինչը ենթադրում է այլևս ոչ պիտանի կամ շատ թանկարժեք ծառայություններից հրաժարում,
- ինտենսիվ ներքին և արտաքին վերահսկողության նկատմամբ կառուցողական ձեռնարկատիրական մշակույթի առկայությունը:

Ակնհայտ է, որ առևտրային կազմակերպության (բանկի) հարմարվողական կայունությունը ժամանակակից պայմաններում բանկի կենսունակության պահպանման կարևորագույն գործոններից է:

**Եզրակացություններ** բաժնում ամփոփված են հետազոտության արդյունքում բացահայտված հիմնախնդիրները, ամփոփ արդյունքները և դրանց լուծման ուղղությամբ մշակված առաջարկությունները: Դրանցից հիմնականները կարելի է ընդհանրացնել հետևյալ կերպ՝

1. 2009թ.-ի ՀՀ տնտեսական անկման 14.1%-անոց ցուցանիշը հաղթահարվել է արտաքին պետական պարտքի կտրուկ ավելացման (ՀՀ արտաքին պետական պարտքը 2009թ.-ին նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 188.1%-ով՝ 2008թ.-ի 1577.2 մլն ԱՄՆ դոլարից 2009թ.-ին հասնելով 2966.7 մլն դոլարի), ինչը 2000-2016թթ.-ի այդ ցուցանիշի ժամակագրական շարքի ամենաբարձր ցուցանիշն է: Իսկ 2010թ.-ին 2009թ.-ի համեմատ ՀՀ արտաքին պետական պարտքն ավելացել է ևս 111.2%-ով՝ հասնելով 3300.0 մլն դոլարի, այսինքն՝ 2010թ.-ին 2008թ.-ի համեմատ ՀՀ արտաքին պետական պարտքն ավելացել է 209.3%-ով: Ինչն էլ հանգեցրել է արտարժույթի փոխարժեքի՝ դրամ / 1 ԱՄՆ դոլարի, կտրուկ թռիչքի, երբ փոխարժեքը 2008թ.-ի 306.0 դրամից 2009թ.-ին հասավ 363.3 դրամի (աճը 118.7%, որը 2000-2016թթ.-ի արտարժույթի փոխարժեքի ժամանակագրական շարքի ամենաբարձր

ցուցանիշն է), այդ ցուցանիշի երկրորդ ամենաբարձր մակարդակը գրանցվել է 2015թ.-ին, երբ ԱՄՆ դուլար / դրամ միջին փոխարժեքը 2014թ.-ի 415.9 դրամից 2015թ.-ին հասավ 477.9 դրամի (աճը կազմել է 114.9%): Այն հանգեցրեց նաև փողի զանգվածի 115.1%-ոց աճի (2009թ.-ի ցուցանիշը 2008թ.-ի նկատմամբ), երբ փողի զանգվածը ժամանակաշրջանի վերջի դրությամբ, 2009թ.-ի 815.0 մլրդ դրամից 2010թ.-ի հասավ 911.4 մլրդ դրամի): Այլ կերպ ասած, ՀՀ-ում 2009թ.-ի «չճանաչված» ճգնաժամը հաղթահարվել է հիմնականում ֆինանսական գործիքների օգնությամբ, այսինքն իրականում չեն ավելացել սպառողական արժեքները, կամ «տնտեսական ճգնաժամի փոսից» տնտեսությունը դուրս է բերվել արժեքային ցուցանիշների օգնությամբ:

2. ՀՀ տնտեսության ներկայիս լուրջ մարտահրավերներից մեկը ՀՀ կազմակերպությունների պարտավորությունների և ժամկետանց պարտքերի աննախադեպ աճն է՝ հատկապես 2010-2015թթ.-ին: Բավական է նշել, որ այդ կազմակերպությունների ընդամենը պարտավորությունները եթե 2010թ.-ին կազմել են 1527.4 մլրդ դրամ, ապա 2015թ.-ին՝ 2690.8 մլրդ դրամ (աճը կազմել է 176.2%, այն դեպքում, երբ այդ նույն ժամանակահատվածում ՀՆԱ-ի աճը դրամական արտահայտությամբ կազմել է 145.4%): Այդ նույն ժամանակահատվածում ժամկետանց պարտավորությունները 0.524 մլրդ դրամից հասել են 22.226 մլրդ դրամի (կամ աճը կազմել է 42 անգամ): Պարտավորությունների կազմում 2010թ.-ին կրեդիտորական պարտքերը կազմել են 503.8 մլրդ դրամ (ընդամենի 330%-ը), իսկ ստացված վարկերի և փոխառությունների դիմաց պարտքերը՝ 1023.5 մլրդ դրամ (ընդամենի 67.0%-ը): Այդ նույն ցուցանիշները 2015թ.-ին կազմել են համապատասխանաբար՝ 782.8 մլրդ դրամ (29.1%) և 1908.0 մլրդ դրամ (70.9%): Այլ կերպ ասած, եթե 2015թ.-ին 2014թ.-ի համեմատ կրեդիտորական պարտքերն ավելացել են 279.0 մլրդ դրամով (կամ 155.4%-ով), ապա ստացված վարկերի ու փոխառությունների դիմաց պարտքերն ավելացել են 884.5 մլրդ դրամով կամ 186.4%-ով:

Բերված տվյալներից ակնհայտ է դառնում, որ ՀՀ առևտրային կազմակերպությունների պարտավորությունների և ժամկետանց պարտքերի ավելի քան 70%-ը պայմանավորված է ստացած վարկերով և փոխառություններով, ինչը և պահանջում է անհապաղ միջոցներ իրականացնել դրանց հետ կապված հիմնախնդիրները լուծելու համար:

3. Առևտրային կազմակերպությունների պարտքային հիմնախնդրի լուծման ներկայիս գործող համակարգը՝ դատական լուծումները տնտեսապես անարդյունավետ են, քանի որ դատարաններում տարեց-տարի ավելանում են դատական ակտերի հիման վրա ստացված և առկա կատարողական վարույթները (2016թ.-ին ստացվել է 1224417 կատարողական վարույթ, իսկ տարեսկզբին առկա են եղել 300393 կատարողական վարույթ): Ըստ որում, գույքային բնույթի բոլոր կատարողական վարույթներով բռնագանձված գումարը 2016թ.-ին կազմել է 19,117 մլրդ դրամ, իսկ չվերականգնված մնացորդ գումարը 2016թ.-ի վերջին կազմել է 64,896 մլրդ դրամ, այսինքն՝ մոտավորապես «վիճահարույց» 4 դրամից միայն 1 դրամն է բռնագանձվում

(2015թ.-ին՝ 5 դրամից միայն 1-ը), ինչը վկայում է դատական համակարգի միջոցով խնդրի լուծման ցածր արդյունավետության մասին:

Նշված խնդրի արմատական լուծման բանալին գտնվում է ՀՀ բանկային համակարգում: Նախ, պետք է լուծել առկա հսկայական պարտքային բեռից ազատվելու խնդիրը, քանի որ պարտքերի կուտակումը և դրանց «փաստացի անվերադարձ» բնույթը հնարավորություն չի տալիս բարձրացնել վարկերի և փոխառությունների մատչելիությունը և վերադարձելիությունը:

4. Հանրապետությունում տնտեսական ակտիվության բարձրացման համար պակաս կարևորություն չունի հարկա-բյուջետային գործիքների կիրառումը: Խոսքն, առաջին հերթին, վերաբերում է հսկայական պարտքերի նվազեցման միջոցառումների մշակմանը: Այս բնագավառում առաջնահերթ է դառնում հարկային համաներման շուտափույթ մասշտաբային կիրառումը, ինչի արդյունքում հատկապես տնտեսավարող սուբյեկտները հնարավորություն կունենան դուրս գալու սնանկացման և լուծարման գործընթացներից, որն առանձնապես լայն մասշտաբներ է ստացել վերջին ժամանակներս (նկատի ունենք այն հազարավոր առևտրային կազմակերպություններին, որոնք պարտքերի պատճառով «վերանում» են տնտեսությունից):

5. Կայունությունը լայն հասկացություն է, որն անխախտության համեմատությամբ գտնվում է պատճառի և հետևանքի վիճակում, որտեղ կայունությունը հետևանք է, իսկ անխախտությունը՝ դրա ապահովման պատճառը: Կայունությունը ձեռք է բերվում անխախտության հիման վրա: Այդ հասկացությունների սկզբունքային տարբերությունը, սակայն, կայանում է այն բանում, որ կայունությունը (երևույթը, գործընթացը) քննարկվում է գործընթացի զարգացման դրական դիրքերից, իսկ անխախտությունը բնութագրում է ստատուս-քվոյի պահպանումը, մշտականության ապահովումը:

Կայունությունը «շարժման» տարրերից մեկն է: Գործնականում այդպիսի մոտեցումը նշանակում է, որ բանկային ոլորտի գործունեության ընթացքում կարող են երևան գալ ավելի բարդ խնդիրներ, որոնք պահանջում են ոչ միայն ձեռք բերված մակարդակի (անխախտության) պահպանում, այլ նաև ձեռնարկելու զարգացման միջոցառումներ (զարգացման կայունություն):

6. Աշխատանքում Wald-ի թեսթի միջոցով փորձ է արվել լրացուցիչ ստուգել գործակիցների միաժամանակյա զրո լինելու հանգամանքը: Հարկ է նկատել, որ երկու հավասարումների դեպքում էլ հաշվարկային գործակիցները հավասար են եղել զրոյի:

Ըստ հաշվարկների՝ փողի զանգվածի և ՀՆԱ-ի միջև չկա երկարաժամկետ ազդեցություն կամ պատճառահետևանքային կապ, իսկ կարճաժամկետ ազդեցության գնահատման ոչ նշանակալի լինելը պայմանավորված է նրանով, որ մոդելում առկա է մոլտիկոլինեարություն: Այլ կերպ ասած ՀՆԱ-ի և փողի զանգվածի միջև առկա է ոչնչով չպայմանավորված բարձր կոռելյացիա:

Ըստ կիրառված երկրորդ մոդելի արդյունքների՝ նշանակալի կարճաժամկետ ազդեցությունը գրանցվել է տնտեսական աճի 2-րդ տարվա ցուցանիշի դեպքում, որը

նշանակալի ազդեցություն ունի վարկի միջին տոկոսադրույքի վրա: Իր հերթին վարկի միջին տոկոսադրույքի նախորդ տարվա ցուցանիշը նշանակալի կարճաժամկետ ազդեցություն է ունեցել ՍԳԻ վրա: Մյուս կողմից ՍԳԻ նախորդ տարվա արժեքը կարճաժամկետ ազդեցություն ունի բանկային տոկոսի հաշվարկային դրույքի վրա: Ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների միջև միակ երկարաժամկետ պատճառահետևանքային կապը գրանցվել է բանկի տոկոսի հաշվարկային դրույքի, վարկի միջին տոկոսադրույքի և ՍԳԻ նախորդ տարվա ցուցանիշների միջև:

Այսպիսով, կարելի է առանձնացնել մի քանի օրինաչափություններ, որոնք բնութագրական են ՀՀ բանկային ոլորտի համար՝

- տնտեսական աճի 2 տարի առաջվա ցուցանիշը կանխորոշում է տվյալ տարվա վարկային տոկոսադրույքի մակարդակը,
- վարկային տոկոսադրույքի նախորդ տարվա ցուցանիշը կանխորոշում է ՍԳԻ տվյալ տարվա մակարդակը,
- ՍԳԻ նախորդ տարվա ցուցանիշը կանխորոշում է բանկային տոկոսի հաշվարկային դրույքաչափը:

Կարելի է պնդել, որ ՀՀ բանկային ոլորտը բնութագրող ցուցանիշների միջև կապն ունի հետևյալ տրամաբանությունը՝ տնտեսական աճի բավարար նախադրյալների դեպքում փոփոխվում է վարկերի տոկոսադրույքի մակարդակը, ինչի ադյունքում փոփոխվում է ՍԳԻ մակարդակը, ինչն էլ բերում է բանկային տոկոսի հաշվարկային դրույքի փոփոխության:

7. Ներկայումս ՀՀ առևտրային բանկերի ակտիվ գործառնությունները լիարժեք չափով չեն բավարարում ՀՀ տնտեսության և երկրի բնակչության պահանջները, ինչպես նաև չեն լուծում այդ ոլորտում կուտակված հիմնախնդիրները: Դրա հետ մեկտեղ, կարգավորման շուկայական և հակաճգնաժամային դասական կանոնակարգերը, Հայաստանի Հանրապետության տնտեսության բացության բարձր ցուցանիշի պատճառով (այդ ցուցանիշը հիմնականում չափվում է արտաքին առևտրաշրջանառության և ՀՆԱ-ի հարաբերակցությամբ, որը 2014թ.-ին կազմել է 51.4%, 2015թ.-ին՝ 45.5%, իսկ 2016թ.-ին՝ 48.1%<sup>8</sup>), չեն աշխատում բավարար արդյունավետությամբ, որպեսզի բանկային ակտիվ գործառնությունները նպաստեն ազգային տնտեսության էական զարգացմանը:

8. ՀՀ բանկային ոլորտի խոցելիությունը պայմանավորված է նաև ստվերային տնտեսության առկայությամբ: Ստվերային տնտեսությունը և դրան ուղեկցող կոռուպցիան բացասական ազդեցություն են թողնում վարկային ներդրումների չափերի և ուղղությունների, ինչպես նաև դրամական հոսքերի վրա, նվազում է մրցակցության մակարդակը, ավելանում են ճգնաժամային երևույթներն ու ռիսկերը ստվերային անկանխատեսելի հայտերի և բանկերի սնանկացման հնարավորությունները, որոնք փոխհատուցվում են հակաճգնաժամային աջակցության միջոցներով՝ հարկատուների

<sup>8</sup> Հաշվարկվել է ՀՀ ԱՎԾ-ի պաշտոնական կայքում՝ [www.armstat.am](http://www.armstat.am) տեղադրված վիճակագրական շարքերի տվյալներով:

միջոցների հաշվին: Այդ հանգամանքները նվազեցնում են ՀՀ տնտեսության ներուժը որպես ամբողջականություն, շահութաբերությունը և թուլացնում են երկարաժամկետ զարգացման սպասումները:

9. Միշտ չէ, որ կարելի է համաձայնվել ՀՀ կենտրոնական բանկի մասնագետների հետ, ըստ որոնց փոքր բանկային կազմակերպություններն ավելի ռիսկային են, քան խոշոր և միջին բանկերը: Միաժամանակ պետք է նշել, որ նրանց հեռանալը շուկայից կվատացնի մանրաձախ հատվածում սպասարկման իրավիճակը, ինչպես նաև բանկային ծառայությունների հասանելիությունը մարզերում: Ոչ խոշոր հաճախորդները նույնպես սպասում են անհատական մոտեցումների իրենց պահանջների և հիմնախնդիրների լուծման գործում, որը նրանց հազիվ թե կարողանան տրամադրել խոշոր բանկերը՝ մանրաձախ առևտրի իրենց ստանդարտացված տեխնոլոգիաներով:

10. Բանկային ոլորտի կայունությունը այդ համակարգի բոլոր տարրերի և ենթակառուցվածքների զարգացման երկարաժամկետ, մշտական և հաշվեկշռված գործընթաց է, որը հանգեցնում է բանկային ոլորտի բոլոր ցուցանիշների ոչ միայն քանակական, այլ նաև որակական փոփոխությունների, ինչպես նաև նպաստավոր պայմաններ է ստեղծում հասարակության ներսում սոցիալ-տնտեսական հարաբերությունների ամբողջ համակարգի զարգացման համար: Ընդ որում, բանկային ոլորտի կայունությունը չի կարող ձեռք բերվել առանց տնտեսության իրական հատվածի և տնտեսությունում գործող այլ սուբյեկտների պահանջունքները հաշվի առնելու: Բանկային ոլորտի համար արտաքին միջավայր համարվող ընդհանուր սոցիալ-տնտեսական միջավայրի անկայունությունն ու հիմնախնդիրները իրենց ազդեցությունն են թողնում բանկային ոլորտի ներքին կայունություն վրա:

Մակրո- և միկրո մակարդակներով կիրառվող՝ բանկային ոլորտի կայունության կառավարման գործիքակազմը մշակելիս հիմնական շեշտադրումը պետք է դրվի ոչ թե առանձին ցուցանիշների (օրինակ՝ գնաճի կամ բանկային տոկոսադրույքների) որոշակի մակարդակների ապահովման, այլ երկրի տնտեսության կայուն զարգացման համար այդ ցուցանիշների բավարար լինելու վրա:

11. Ընդհանուր առմամբ, բանկային ոլորտում ճգնաժամերի վաղ կանխարգելման համակարգը պետք է ներառված լինի այդ ոլորտի զարգացման ռազմավարական պլանավորման ընդհանուր կառուցակարգում: Իր հերթին, անորոշության պայմաններին և արագ փոփոխվող արտաքին միջավայրին հարմարվելու համար բանկային ոլորտի ռազմավարական պլանավորումը և բանկային ոլորտի կայունության սցենարները պետք է համապատասխանեն (համապատասխանեցվեն) երկրի սոցիալ-տնտեսական զարգացման նպատակներին: Ռազմավարական պլանավորումը պետք է պարտադիր կարգով ներառի նաև ճգնաժամերի վաղ կանխարգելման համակարգը, ինչը և՛ հանրապետական և՛ մարզային մակարդակներում ոլորտի կառավարումն իրականացնող մարմիններին թույլ կտա հետևել արտաքին միջավայրի փոփոխություններին և «իրական ժամանակի ընթացակարգով», ճգնաժամերի

սկզբնական փուլում, որոշել թե մշակված սցենարներից ո՞ր մեկը կարող է արդյունավետ լինել տվյալ պարագայում, ինչպես նաև իրականացնել կառավորման այն միջոցառումները, որոնք թույլ կտան խուսափել ճգնաժամից և ապահովել բանկային ոլորտի կայուն զարգացումը:

12. Ժամանակակից տնտեսության պայմաններում բանկային ոլորտի զարգացումը պայմանավորված է մի շարք մարտահրավերներով, որոնք կապված են ինչպես արտաքին պայմանների փոփոխության, այնպես էլ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ բանկային ապրանքների ստեղծման ու ծառայությունների մատուցման հետ: Ժամանակակից ֆինանսական շուկան բանկային ոլորտի համար մի շարք հնարավորություններ է ստեղծում, որոնց օգտագործմամբ էլ պահմանավորված է բանկային գործունեության կայունությունը և բանկի մրցունակությունը: Դրանցից հիմնականներն են՝

- միջազգային ստանդարտների ապահովումը, այդ թվում՝ մատուցվող ծառայությունների որակի, բանկային ապրանքների առաջարկի, նորարարությունների ներդրման, նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ոլորտներում,
- բանկերի կողմից մատուցվող ծառայությունների դիվերսիֆիկացումը,
- ռիսկերի կառավարման մասնագիտացված համակարգի ներդրումը,
- բանկի կապիտալի ռացիոնալ տեղաբաշխումը:

Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Վ.Բոյախյան. «ՀՀ ֆինանսական համակարգի զարգացման օրինաչափությունները 2000-2015թթ», «Ֆինանսներ և էկոնոմիկա», N 11-12 (195-196), 2016թ., էջ 68-71:

2. Վ.Բոյախյան. «Առևտրային կազմակերպության (բանկի) գործունեության դիվերսիֆիկացումը որպես կայունության ապահովման միջոց», «Ֆինանսներ և էկոնոմիկա», N 5-6 (201-202), 2017թ., էջ 127-131:

3. Վ.Բոյախյան. «Բանկային ոլորտում ճգնաժամային իրավիճակների վաղ կանխարգելման համակարգի ստեղծման հիմնական ուղղությունները», «Տնտեսության զարգացման և կառավարման հիմնախնդիրներ», գիրք 10, 2017թ., էջ 184-199:

4. Վ.Բոյախյան. «Տնտեսական աճի ապահովման հետճգնաժամային հիմնախնդիրները», «Այլընտրանք» գիտական հանդես, N 2, 2017թ., էջ 197-206:

5. Վ.Բոյախյան. «Բանկային ոլորտի կայունության ապահովման առանձին մեթոդներն ու ձևերը», «Այլընտրանք» գիտական հանդես, N 3, 2017թ., էջ 52-62:

6. Վ.Բոյախյան. «Բանկային ոլորտի կայունության ապահովման հիմնախնդիրները», «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի հանրապետությունում», 2017թ., էջ 84-90:

**ВАГЕ ГАГИКОВИЧ БОЯХЧЯН**

**ПРОБЛЕМЫ УПРАВЛЕНИЯ УСТОЙЧИВОСТЬЮ БАНКОВСКОГО  
СЕКТОРА, СПОСОБСТВУЮЩЕГО РАЗВИТИЮ ЭКОНОМИКИ В  
РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ**

Диссертация на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 – “Экономика, управление хозяйством и его отраслями”.

Защита диссертации состоится 22 декабря 2017г. в 13<sup>30</sup>, на заседании Специализированного совета 015 ВАК Республики Армения по экономике, действующего в Ереванском государственном университете, по адресу: 0009, г. Ереван, ул. Х.Абовяна 52.

**Р Е З Ю М Е**

Настоящая диссертация посвящена изучению и анализу устойчивости банковского сектора Республики Армения и его вкладу в деле обеспечения экономического роста.

Последствия экономического кризиса 2008 года пока ещё не устранены, в частности это касается обеспечения достаточного уровня экономического роста и достижения докризисных показателей ВВП. Наличие современного банковского сектора играет значительную роль как для макроэкономической стабильности, так и для субъектов экономической деятельности. Автор диссертации исследует проблемы устойчивости банковского сектора РА в целом, а также предлагает пути достижения устойчивости путем диверсификации деятельности самих коммерческих банков.

Основной целью исследования является совершенствование методов обеспечения устойчивости банковского сектора, позволяющих прежде всего способствовать экономическому росту РА.

Для достижения поставленной в диссертационной работе цели представлены следующие задачи:

- выявить посткризисные проблемы обеспечения экономического роста в РА и основные причины их проявления;
- исследовать препятствия, существующие для ведения бизнеса на микро- и макро- уровнях;
- исследовать понятия и принципы, определяющие устойчивость банковской системы, а также основные подходы к определению устойчивости;
- с помощью эконометрической модели оценить тенденции изменения и взаимозависимость основных финансовых и экономических

макропоказателей в РА;

- проанализировать влияние банковского сектора на рост экономики, а также выявить особенности рыночной конкуренции в банковской сфере;
- исследовать основные направления обеспечения устойчивости банковской сферы.

Основные научные результаты исследования имеют теоретическое и практическое значение, научная новизна которых заключается в следующем:

1. Обоснованы и исследованы, а также классифицированы по степени важности современные вызовы для экономического развития РА. Среди вызовов выделена необходимость решения проблемы долгов коммерческих организаций (особенно малых и средних), поскольку долговые проблемы таких организаций являются наиболее острыми и первоочередными.

2. С применением эконометрической модели исследованы и оценены долгосрочные и краткосрочные взаимозависимости между показателями динамики ВВП (экономического роста) РА, индекса потребительских цен (ИПЦ), денежной массы, банковской процентной ставки и кредитной процентной ставки.

3. Проведена оценка соответствия механизмов регулирования, применяемая в банковской сфере РА, современным нормам регулирования этой сферы деятельности. На основе проведённого анализа автором предложен инструментарий обеспечения устойчивости банковской системы, основной целью которого должно стать обеспечение потребностей реального сектора экономики, а также обеспечение устойчивого экономического развития республики.

4. Автором предложена система раннего предупреждения кризисов в коммерческих банках РА, которая предполагает внедрение и наличие структуры, основной целью которой является не устранение последствий кризисов, а внедрение в коммерческих банках принципов стратегического планирования, позволяющих не допускать, предотвращать возникновение кризисов.

5. Представлены предложения относительно диверсификации деятельности коммерческих банков, которые прежде всего должны учитывать внедрение новейших технологий в сферу банковских услуг, устранение национальных границ для предоставления таких услуг, а также расширение понятия банковского продукта.

**VAHE GAGIK BOYAKHCHYAN**

**PROBLEMS OF MANAGING THE SUSTAINABILITY OF THE BANKING  
SECTOR PROMOTING AN ECONOMIC DEVELOPMENT IN THE  
REPUBLIC OF ARMENIA**

The dissertation is submitted for pursuing of scientific degree of PhD of economics in the field  
08.00.02 “Economics, Management of the Economy and its Branches”

The defense of the dissertation will take place at 13<sup>30</sup>, on December 22nd, 2017, at the Meeting of  
the Specialized Council 015 in Economics of the Supreme Certifying Committee of the Republic of  
Armenia acting at the Yerevan State University.  
Address: 52 Abovyan str., Yerevan, 0009, Armenia

**S U M M A R Y**

This dissertation is devoted to the study and analysis of the stability of the banking sector of the Republic of Armenia and its contribution to economic growth.

The consequences of the economic crisis of 2008 have not yet been eliminated, in particular, this concerns ensuring a sufficient level of economic growth and achieving pre-crisis level of GDP. The presence of a modern banking sector plays a significant role both for macroeconomic stability and for economic operators. The author of the thesis examines the problems of the stability of the banking sector of the Republic of Armenia as a whole, and also offers ways to achieve sustainability by diversifying the activities of commercial banks themselves.

The main objective of the study is to improve the methods of ensuring the stability of the banking sector, which, first of all, enable the economic growth of the Republic of Armenia.

To achieve the goal set in the thesis, the following tasks are presented:

- Identify the post-crisis problems of ensuring economic growth in the RA and the main reasons for their manifestation;
- Explore the obstacles that exist for doing business at the micro- and macro- levels;
- Explore the concepts and principles that determine the stability of the banking system, as well as the basic approaches to the definition of sustainability;
- Use the econometric model to assess the trends and interdependence of the main financial and economic macroeconomic indicators in the Republic of Armenia;

- Analyze the impact of the banking sector on the growth of the economy, as well as identify the features of market competition in the banking sector;
- Explore the main directions of ensuring the stability of the banking sector.

Main scientific results of the study have theoretical and practical significance, scientific novelty of which is as follows:

1. Modern challenges for the economic development of the Republic of Armenia have been substantiated and investigated, and also classified according to their importance. Among the challenges highlighted the need to address the problem of debts of commercial organizations (especially small and medium-sized ones), since debt problems are the most acute and urgent.

2. Long-term and short-term interdependencies between indicators of GDP (economic growth) dynamics of the RA, the consumer price index (CPI), the money supply, the bank interest rate and the credit interest rate were explored and evaluated using the econometric model.

3. Conformity assessment of the regulatory mechanisms applied in the banking sector of the Republic of Armenia was carried out, and the current regulation standards for this field of activity were assessed. Based on the analysis, the author suggests a tool for ensuring the stability of the banking system, whose main goal should be to meet the needs of the real sector of the economy, as well as ensure sustainable economic development of the republic.

4. The author proposes an early warning system for crises in commercial banks of the Republic of Armenia, which presupposes the introduction and availability of a system whose main purpose is not to eliminate the consequences of crises, but to introduce the principles of strategic planning in commercial banks that prevent the occurrence of crises.

5. The proposals for the diversification of the activities of commercial banks are presented, which first of all should take into account the introduction of new technologies in the sphere of banking services, the elimination of national borders for the provision of such services, and the expansion of the concept of a banking product.